# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1342

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22.10.2025 Թ. ԹԻՎ 1297 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել համայնքի ղեկավարի 22.10.2025 թ. թիվ 1297 որոշման մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ,,նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իջևան համայնքի ղեկավարի 22.10.2025 թ. թիվ 1297 որոշումը կարդալ.

,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱՉԱՋՈՒՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.09294 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Լյովա Հակոբի Գասպարյանը՝ ծնված 16.07.1942 թ., Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր գյուղի վարչական սահմաններում սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի կառուցապատման հողամասի հիմքերի վերականգնման խնդրանքով: Հողամասի օրինական մակերեսը, ըստ Աչաջուր գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 07.03.1991թ. թիվ 3 որոշման կազմում է 0.15 հա /ծածկագիր 11-013-0099-0061/, չափագրությունից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.09294 հա, ուստի դիմել է օրինական 0.09294 հա մակերեսով հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով: Հաշվի առնելով, որ նշված հողամասը չի գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 8-րդ գլխի թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

2. Վերականգնել քաղաքացի Լյովա Հակոբի Գասպարյանի սեփականության իրավունքը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աչաջուր գյուղի վարչական սահմաններում գտնվող, 0.09294 հա բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ /ծածկագիր 11-013-0099-0061/ և օրենքի ուժով համարել քաղաքացու սեփականությունը:

3.Քաղաքացի Լյովա Հակոբի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.09294 հա մակերեսով հողամասին /ծածկագիր 11-013-0099-0061/ տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Աչաջուր 3-րդ փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 13 հողամաս:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման :,,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1343

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Մերուժան Վահրամի Հարությունյանը, հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 29.10.2025թ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Իջևանի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն՝ Իջևանի համայնքապետարանի Ֆինանսատնտեսական,հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրամադրված տեղեկատվության,ՀՀ Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածով սահմանված անշարժ գույքի հարկով հարկվող օբյեկտ համարվող ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ-ի կողմից տրամադրված շենքերի և շինությունների հաշվառման և գնահատման տվյալների քննարկվող անշարժ գույքը՝ ք.Իջևան Գանիևի փողոց,7-11, հանդիսանում է քաղաքացի Մերուժան Հարությունյանի սեփականությունը, ինչը ՀՀ Հարկային օրենսգրքով հանդիսանում է հարկվող օբյեկտ:

Գույքի համար վճարման ենթակա հարկը կազմում է 995.350 /Ինը հարյուր իննսունհինգ հազար երեք հարյուր հիսուն / ՀՀ դրամ, ինչը 2015-2025թթ ընկած ժամանակահատվածում չի վճարվել, որից ապառք՝ 768.196/Յոթ հարյուր վաթսունութ հազար հարյուր իննսունվեց/ ՀՀ դրամ, նշված ժամանակահատվածի համար անշարժ գույքի հարկը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 227.154 /Երկու հարյուր քսանյոթ հազար հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամի չափով, ընդամենը՝ 995.350 /Ինը հարյուր իննսունհինգ հազար երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամ:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ն մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 04. 11.2025թ հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք 545939541 փոստ. Անդորրագիր / քաղաքացի Մերուժան Հարությունյանը:

Վերջինս չէր ներկայացել վարչական վարույթի լսումներին:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահամադրության 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկը սեփականության իրավունքով նշված օրենքի 225-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահամանված կարգով և չափով ՀՀ համայնքների բյուջե վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

ՀՀ Հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի համաձայն .

1.Կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի գումարները / այդ թվում օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում և կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները / անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում հետևյալ ժամկետներում՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները.

1/Ֆիզիկական անձինք՝ մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ

2/ կազմակերպությունները՝ գույքի հաշվետու կիսամյակի՝ 1-ին կիսամյանկում մինչև հարկային տարվա հունիսի 1-ը ներառյալ, 2-րդ կիսամյակում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

ՀՀ Հարկային օրենսգրքի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքնչյուր օրվա համար հարկ վճարողը վճարում է տույժ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 43-րդ հոդվածի համաձային.

1.Հարկային պարտավորություն է համարվում որևէ տեսակի հարկի և վճարի, ինչպես նաև օրենսգրքի և վճարների վերաբերյալ ՀՀ օրենքների դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով և վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված տույժերի, տուգանքների, ինչպես նաև վնասի հատուցման գումարներ վճարելու՝ հարկ վճարողի պարտավորությունը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն համայնքապետը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձում:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահանդրությամբ,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի,ՀՀ Հարկային օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ , 58-60-րդ հոդվածներով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1.Քաղաքացի Մերուժան Վաhրամի Հարությունյանից հօգուտ Իջևան համայնքի բյուջե գանձել 995.350 /Ինը հարյուր իննսունհինգ հազար երեք հարյուր հիսուն / ՀՀ դրամ, որպես ք. Իջևան, Գանինի փողոց, 7-11 գույքի համար վճարման ենթակա անշաժ գույքի հարկի գումար, որից ապառք 768.196/ Յոթ հարյուր վաթսունութ հազար հարյուր իննսունյոթ / ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ 227 .154 /Երկու հարյուր քսանյոթ հազար հարյուր հիսունչորս / ՀՀ դրամ:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Իջևանի համայնքապետին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1344

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 03.06.2024Թ. ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹԻՎ154 ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ 07.08.2024Թ. ԹԻՎ646 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել Տավուշի մարզի Իջևան համայնքի ղեկավարի կողմից 03.06.2024թ. տրամադրված թիվ154 նախագծման թույլտվության և 07.08.2024թ. թիվ646 շինարարության թույլտվության մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 19.03.2015թ N596-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Տավուշի մարզի Իջևան համայնքի ղեկավարի կողմից 003.06.2024թ. տրամադրված թիվ154 նախագծման թույլտվության և 07.08.2024թ. թիվ646 շինարարության թույլտվության մեջ, օբյեկտի անվանումը ,,Ավտոտնակի վերակառուցում, տնտեսական վերնահարկով,, փոխարեն կարդալ՝ ,,Ավտոտնակի վերակառուցում /հարկի ավելացում/ որպես տնտեսական շինություն,,:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1345

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 22/61 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՄԻ ՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՄԱՍԻՆ

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15042015-11-0026 …այականի, Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաքի Աբովյան փողոց թիվ 22/61 հասցեի 156.0քմ հողամասը …նդիսանում է քաղաքացիներ Նիկոլայ Ալբերտի Ղալթախչյանին և Մանե Էդվարդի Ավագյանին սեփականությունը: Վերջիններս դիմել են Իջևան համայնքի ղեկավարին ՝ նշված հասցեում առկա 572.1քմ մակերեսով արհեստանոցի մի մասի՝ 286.0քմ հատվածի գործառնական նշանակությունը որպես հասարակական սպասարկման օբյեկտի փոխելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 02-ի թիվ 88-Ն որոշման, ինչպես նաև ,,Տեղական ինքնակառավարման,, օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Քաղաքացիներ Նիկոլայ Ալբերտի Ղալթախչյանին և Մանե Էդվարդի Ավագյանին սեփականություն հանդիսացող Իջևան համայնք, Իջևան քաղաքի Աբովյան փողոց թիվ 22/61 հասցեի արհեստանոցի մի մասի՝ 286.0քմ մակերեսով հատվածի /համաձայն հատակագծի/ գործառնական նշանակությունը փոխել որպես հասարակական սպասարկման օբյեկտի:

2.Պարտավորեցնել համասեփականատերերին.

1/Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված փոփոխությունը …ետականորեն գրանցելու նպատակով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1346

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Ս. ՕՀԱՆՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ, 11-001-0109-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ 0.00807 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքաշինական նպատակներով Իջևան համայնքի Իջևան քաղաքի Ս. Օհանյան փողոցում առանձնացվել է 0.00807 հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ կառավարության 06.10.2005թ. թիվ 2417-Ն որոշման, նշված 0.00807 հա մակերեսով հողամասը հանդիսանում է Իջևան համայնքին փոխանցված, բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակության հողամասի մի մաս /ծածկագիր 11-001-0109-0001/: Անհրաժեշտություն է առաջացել փոխել առանձնացված 0.00807 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.11-001-0109-0001 ծածկագրով 0.00807 հա մակերեսով հողամասը, բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակությունից փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարք:

2.Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Ս. Օհանյան փողոցում առանձնացնել բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00807 հա հողամաս՝ համաձայն հաստատված հատակագծի:

3.Իջևան համայնքի Իջևան քաղաքի Ս. Օհանյան փողոցում առանձնացված 0.00807 հա մակերեսով հողամասին /ծածկագիր 11-001-0109-0001/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, քաղաք Իջևան, Ս. Օհանյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 35:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1347

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Ս. ՕՀԱՆՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ, 11-001-0109-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ 0.03642 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքաշինական նպատակներով Իջևան համայնքի Իջևան քաղաքի Ս. Օհանյան փողոցում առանձնացվել է 0.03642 հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ կառավարության 06.10.2005թ. թիվ 2417-Ն որոշման, նշված 0.00807 հա մակերեսով հողամասը հանդիսանում է Իջևան համայնքին փոխանցված, բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակության հողամասի մի մաս /ծածկագիր 11-001-0109-0001/: Անհրաժեշտություն է առաջացել փոխել առանձնացված 0.03642 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.11-001-0109-0001 ծածկագրով 0.03642 հա մակերեսով հողամասը, բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակությունից փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարք:

2.Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Ս. Օհանյան փողոցում առանձնացնել բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.03642 հա հողամաս՝ համաձայն հաստատված հատակագծի:

3.Իջևան համայնքի Իջևան քաղաքի Ս. Օհանյան փողոցում առանձնացված 0.03642 հա մակերեսով հողամասին / ծածկագիր 11-001-0109-0001/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, քաղաք Իջևան, Ս. Օհանյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 37:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1348

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԵՏԱՂԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑՈՒՄ, 11-001-0015-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ 0.015 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքաշինական նպատակներով Իջևան համայնքի Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցում առանձնացվել է 0.015 հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ կառավարության 06.10.2005թ. թիվ 2417-Ն որոշման, նշված 0.015 հա մակերեսով հողամասը հանդիսանում է Իջևան համայնքին փոխանցված, բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակության հողամասի մի մաս /ծածկագիր 11-001-0015-0001/: Անհրաժեշտություն է առաջացել փոխել առանձնացված 0.015 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.11-001-0015-0001 ծածկագրով 0.015 հա մակերեսով հողամասը, բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակությունից փոխադրել բնակավայրերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողերի շարք:

2.Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցում առանձնացնել բնակավայրերի նպատակային, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 0.015 հա հողամաս՝ համաձայն հաստատված հատակագծի:

3.Իջևան համայնքի Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցում առանձնացված 0.015 հա մակերեսով հողամասին /ծածկագիր 11-001-0015-0001/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, քաղաք Իջևան Մետաղագործների փողոց, թիվ 16/8:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1349

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԼՈՒՍԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՏԻՐԱՊԵՏՎՈՂ 0.16350ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-034-0035-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Լիդա Վաղինակի Եգանյանը՝ ծնված 04.11.1938թ., որ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Լուսաձոր բնակավայրի վարչական սահմաններում ձեռք է բերել բնակելի տուն՝ իր հողամասով /ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր գ/մ թիվ 6838, կազմված 23.10.2025թ./: Բնակելի տան զբաղեցրած հողամասի օրինական մակերեսը, ըստ Լուսաձոր բնակավայրի 20.11.1991թ. թիվ 3 որոշման կազմում է 0.16hա /ծածկագիր 11-034-0035-0001/, [illegible]հագրումից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.16350hա, որի վրա առկա է 1940թ. կառուցված 39.1 քմ բնակելի տուն, ուստի դիմել է օրինական 0.16hա մակերեսով և 0.0035hա մակերեսով սահմանազատված, չկառուցապատված հողամասի և մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական 0.16hա մակերեսով և 0.0035hա մակերեսով սահմանազատված, չկառուցապատված հողամասի և քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված 1940թ. կառուցված 39.1քմ ներքին մակերեսով բնակելի տան իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով /ծածկագիր 11-034-0035-0001/:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 0.16350hա մակերեսով հողամասը և 39.1քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը կառուցված չի և չի գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի 3-րդ կետի, ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման, պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել՝ Իջևան համայնքի Լուսաձոր բնակավայրի /ծածկագիր 11-034-0035-0001/ գտնվող, քաղաքացի Լիդա Վաղինակի Եգանյանին պատկանող 0.16350 մակերեսով հողամասի սահմանները, ըստ ճշտված սահմաններով հատակագծի /ծածկագիր 11-034-0035-0001/:

2. Վերականգնել քաղաքացի Լիդա Վաղինակի Եգանյանի իրավունքը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Լուսաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, օրինական 0.16hա մակերեսով և 0.0035hա մակերեսով սահմանազատված, չկառուցապատված հողամասի և 39.1քմ ներքին մակերեսով բնակելի տան նկատմամբ /ծածկագիր 11-034-0035-0001/ և օրենքի ուժով համարել քաղաքացու սեփականությունը:

3. Քաղաքացի, Լիդա Վաղինակի Եգանյանին պատկանող 0.16350hա մակերես հողամասով /ծածկագիր 11-034-0035-0001/ բնակելի տանը տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Լուսաձոր, 1-ին փողոց, 59 բնակելի տուն:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

05 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ